600.0352.09.08.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 օգոստոսի 2017 թվականի №352Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա)Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի մարտի 23-ի №119Ա որոշմամբ «Սիլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0107 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), որը Հանձնաժողովի 2007 թվականի հոկտեմբերի 19-ի №468Ա որոշմամբ վերաձևակերպվել է «ՖԱՅԲՐՈՆԵՏ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ,

բ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 10-ի վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 21-ի որոշմամբ սկսվել է Ընկերության լուծարման գործընթացը,

գ) Ընկերության սնանկության գործով կառավարչի ներկայացուցիչը 2017 թվականի հուլիսի 26-ին գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ Ընկերությանը տրամադրված Լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ

մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝
   1) 2007 թվականի մարտի 23-ի «Սիլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիա տրամադրելու մասին» №119Ա որոշումը,
   2) 2007 թվականի հոկտեմբերի 19-ի «Սիլիցիում Մայկրո Սիստեմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի №0107 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №468Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով Ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 օգոստոսի 2017թ.